

Ինչպես ներբեռնել Ամերիաբանկի փլագինը

Ամերիաբանկի փլագինը հնարավորություն է տալիս առցանց խանութներում վճարային քարտերով անկանխիկ գնումներ կազմակերպել:

Փլագինի ներբեռնումը բավականին դյուրին է և պահանջում է հաշված վայրկյաններ:

Ներբեռնման ավարտին հասանելի են փլագինի լռելյայն (default) կարգաբերումները, որոնք կարող եք, անհրաժեշտության դեպքում, ցանկացած պահի փոփոխել:

Փլագինին համապատասխանող Shopware-ի նվազագույն տարբերակը 5.4.0-ն է, իսկ PHP-ի նվազագույն տարբերակը՝ 5.6:

Փլագինը տեղադրելուց առաջ խնդրում ենք հիշել, որ այն կախված է php soap client-ից:

Համոզվեք, որ php soap client-ը տեղադրված/ակտիվացրած է Ձեր սերվերի վրա, եթե ոչ, խնդրում ենք նախ տեղադրել այն:

Իմանալ ավելին՝ հետևյալ հղումով՝ <https://stackoverflow.com/questions/11584426/how-do-i-enable-enable-soap-in-php-on-linux>

Փլագինն ունենալու համար՝

1. բեռնել փլագինը
2. տեղադրել փլագինը
3. ակտիվացնել
4. կատարել համապատասխան կարգաբերումներ
5. դատարկել/թարմացնել առցանց խանութի քեշերը